



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Wangsten  
Glenypru

891.99

U-68



24032

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ  
ՈՒՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 9103  
19 NOV 2010

# ԱՊՐԵԼՈՒ ԳԱՂՏՆԻՔԸ

891.99

Վ-68

Գ-11

պ

2193

~~12645~~

Գ. Ե.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԽԱՆԱԿ  
ՈՒՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
№ 9103  
~~12645~~

ԲԱՔՈՒ

Տպարան Ա. Անտոնյանցի.

1903

13 .00. 1913

20049



40  
=

Ա.

Даволено Цевгурюю. Тифлисы, 3 Мая 1908 г.



2046  
41

— Այդպէս ուրեմն, հեռանում ես Թիֆլիսից, հա՛ն:

— Այո՛:

— Որոշել ես զիւզում գործել, լսեցի այդ և շնորհաւորում եմ քեզ դրա համար: Հրաշալի միտք է, բարեկամս, քաղաքի ինտրիզային կեանքից հեռանալ և զիւզի խաղաղութեան մէջ գործել անձայն, անշշուկ և օգտակար լինել:

— Մտածեցի, որ այս ուժերովս քաղաքում չեմ կարող գործել, քանի որ այստեղ է ժողովուրդ մեր ինտելիգենցիան, մինչդեռ զիւզական ժողովուրդը դեռ մինչև այսօր երազում իսկ չէ տեսել մի զարգացած և անձնազոհ ուսուցչի երես: Ա՛հ, ներողութիւն, ես

որ սկսում եմ գիւղի մասին խօսել, ձանձրանալի եմ դառնում պարզապէս: Քո մասին խօսենք: Լսեցի որ գնում ես Բագու բարերար գտնելու արտասահման գնալու համար:

— Այո, եթէ աջողուի միայն:

— Ե՞րբ ես մեկնելու Թիֆլիսից:

— Հինգշաբթի օր:

— Ես էլ նոյնպէս, ուրեմն մինչև Եւլախ ճանապարհորդակից կըլինենք, չասես:

— Ի հարկէ, ի հարկէ: Առ այժմ ցը՛ր ես շտապում եմ գնալ Միանսարեանցի մօտ:

— Հնա, այդ ուղի՞ղ է, որ նա գնում է ժրնե քիմիա ուսումնասիրելու համար:

— Այո: Չաքուճեանն էլ գնում է Պետերբուրգ բժիշկ դառնալու:

— Երանի՛ նրանց. ինչպէ՛ս էլ շուտ աջողեցրին: Ինչ մեղքս պահեմ, ես էլ ցանկանում էի մի քանի տարի գէթ անցկացնել Եւրոպայում, որի քաղաքակրթութեան և առաջադիմութեան մասին այնքան շատ բաներ ենք լսել, որոնցից ոչինչ չենք հասկացել և սովորել: Բայց ինչ արած, երբ միջոցները պակասում են: Զգում եմ, որ այնքան լապատրաստուած չեմ իմ գործունէութիւնը սկսելու համար, բայց կարծում եմ, որ ունեցածովս էլ մասամբ կարող եմ օգտակար լինել այն հասարակութեան, որ ինձ ծնաւ, որ

ինձանում ծնեցրեց այն բոլոր վատ լատիութիւնները, որ ունի ինքը և որ հազիւ կարողացայ հինգ վեց տարուայ ընթացքում քիչ թէ շատ ինձանից հեռու քշել:

Իե՛ռ Մարտիրոսեանը երկար կը խօսէր, եթէ Մանուէլեանն իւր շտապ գործերն առարկելով ձեռքը չմեկնէր «ցոտսութիւն» ասելու:

Մարտիրոսեանն այն երջանիկ թուականի ծնունդներից էր, երբ իւրաքանչիւր ինտելիգենտ մարդ մտածում էր որ և է կերպով օգտակար լինել հասարակութեան, որքան իւր ուժերը կը ներէին իրեն: Հէնց այդ ժամանակ էր, որ մի տարօրինակ հոսանք շատերին մղում էր դէպի գիւղերը, ուրիշներին դէպի համալսարան, որպէս զի աւելի լաւ դաստիարակուած կարողանան աւելի մեծ զարկ տալ գիւղական և գաւառական կեանքի առաջադիմութեան:

Մարտիրոսեանը, Ներսիսեան ուսումնարանն աւարտելուց յետոյ, որոշեց իսկոյն հեռանալ Թիֆլիսից և ինքն իրեն նուիրել այն հասարակութեանը, «որ իրեն ծնել էր, որ իրենում ծնեցրել էր բոլոր այն թերութիւնները, որ ունէր ինքը, հէնց այն հասարակութիւնը»: Նա ունէր ազնիւ իդէալներ և բարի ձգտումներ: Նա պատրաստ էր իւր շտապ

Տերը գոհել հասարակութեան շահերը պաշտպանելու համար: Նա ինքնիրեն վարձատրուած պիտի համարէր, եթէ կարողանար իւր հայրենի գիւղը գնալ և այնտեղ իւր հայրենակիցների և բարեկամների առաջադիմութեան, կեանքի բարեփոխութեան և վիճակի երջանկութեան համար գործել: Նա իւր ուսումնարանական կեանքի հինգ վեց տարուայ ընթացքում շատ բաներ էր կարդացել, լսել և խօսել ինտելիգենտ գիւղացիների պարտականութեանց մասին և, որ գլխաւորն է, իւր կարգացածների ազդեցութիւնից մղուած մեծ առաջադիմութիւն էր արել երազների և ոգևորութեան աշխարհում: Նա հաւատում էր անհատի բարոյական ուժերին և ձեռներէցութեանը, դրա համար վկայական ձեռք բերելուց մի քանի օր լետոյ յայտնեց իւր բոլոր ընկերներին, որ ինքն ուզում է գիւղ գնալ, առանձնանալ այնտեղ և օգտակար լինել:

Ընկերները շատ ուրախութեամբ և անբացատրելի ոգևորութեամբ լսեցին այդ նորութիւնը: Իրաւ է, նրանք շատ անգամ էին լսել նրանից, որ ուզում է շրջանաւարտ լինելուց լետոյ գիւղ գնալ, բայց կասկածով էին վերաբերում նրա ասածներին, թէև նա նրանց ձանձրացնում էր միշտ իւր իդէալների, իւր ծրագրների և իւր գործունէութեան մա-

սին խօսելով: Չէ որ շատերը խաբել էին իրենց և վկայական ստանալուց լետոյ մոռացել էին իրենց ձգտումներն ու իդէալները և աշխատում էին իրենց համար կիսաբուրժուական հանգստութիւն ստեղծել: Ինչ որ է, նրանք, Մարտիրոսեանի ընկերները, ուզեցին մի ճաշ սարքել ի պատիւ իդէալի համար իրենցից հեռացող ընկերոջ: Այդ ճաշին ներկայ էին բոլորը: Այնտեղ էին և՛ Մարտիրոսեանը, Չաքուճեանը և Մանուէլեանը, որոնցից առաջինը գնում էր Ժընև քիմիա ուսումնասիրելու, երկրորդ Պետերբուրգ բժիշկ դասուլու, իսկ երրորդը Բագու բարերար գտնելու համար: Այդ ճաշին ներկայ եղողներից մի քանիսն էլ որոշել էին հեռանալ Թիֆլիսից մի սարի լետոյ. նրանք էլ իդէալիստներ էին Մարտիրոսեանի նման, սնուած էին նրա գաղափարներով, ունէին նոյն ձգտումները, ինչպէս իրենց բոլոր ընկերները, ինչպէս և՛ Մինասարեանը, Չաքուճեանը և Մանուէլեանը, որոնք մտածում էին համալսարանից վերադառնալուց լետոյ գաւառական յետ ընկած քաղաքներում սկսել գործունէութիւնը:

Համեստ էր նրանց սեղանը, բայց գինին անպակաս էր: Կենացները վերջ չունէին: Իւրաքանչիւր կենացից առաջ մի ոգևորուած ճառ կամ քաջալերական ինչ որ բարեմաղ-

Թուփիւն «կեցցէ»-ների ձայներ էր բարձրացնում: Խօսում, վիճում էին անվերջ:

Վերջապէս Մարտիրոսեանը խօսք խընդրեց և անբացատրելի աղմուկի մէջ բարձրացաւ նստած տեղից, վերցրեց առաջը դրուած լիքը բաժակը և ասաց.

— Ծնորհակալ եմ ձեզանից, իմ ազնիւ ընկերներ. ձեր արած ցոյցերը և ձեր ցոյց տուած համակրութիւնն ու սէրն իմ սիրտը լցնում են անասելի հրճուանքով և ոգևորութեամբ: Այսօր ձեզանից բաժանուում եմ ես: Կարծեմ աւելորդ է ասել, թէ որքան անտանելի է այս բաժանումը: Բաժանուել այն ընկերներից, որոնց հետ հիւսեցիր քո իղէալն արցունքներով, քո ձգտումները պաշտեցիր տանջանքներով և վշտերով, և որոնց հետ կրեցիր հազարաւոր զրկանքներ՝ իսկապէս անտանելի է: Բայց այնու հանդերձ առանց երկմտելու հեռանում եմ ես ձեզանից, առանց տատանուելու թողնում եմ Թիֆլիսը, որովհետև կատարելապէս համոզուած եմ, որ դուք ուրախանում էք իմ մեկնելու համար և ձեր սիրտն ու հոգին գնալու են ինձ հետ դէպի այն խուլ անկիւնը, որ կոչուում է գիւղ և ուր լինել ձեր բոլորի բաղձանքն է: Ես համոզուած եմ, որ դուք էլ այնքան հպարտանում էք ինձանով, որքան ես, երբ տես-

նում էք ինձ այն փշոտ ճանապարհի մուտքին, որ տանում է ինձ դէպի իղէալս և որի վրայ բիւրաւոր խոչընդոտներ ինձ արգելք պիտի հանդիսանան: Ես կը յաղթեմ այդ խոչընդոտներին. վստահութեամբ կասեմ այդ, որովհետև թէև չունիմ մեծ գիտնական պաշար և զօրութիւն, բայց ունիմ ձեռներէցութիւն, կամքի ոյժ և գիտակցական ոգևորութիւն: Գտարկենք այս բաժակները, ազնիւ ընկերներ, Միանսարեանի ու Չաքուճեանի աջող ճանապարհորդութեան և Մանուէլեանի ծրագրների աջողութեան, որպէս զի վերագաւնալով աւելի գիտուն ու աւելի քաղաքակրթուած մեզ օրինակ հանդիսանան իրենց ձեռներէցութեամբ, գիտութեամբ ու գործունէութեամբ: X

Կեցցէ և հուրրա աղաղակների մէջ լըսուում էին Մարտիրոսեանի վերջին խօսքերը: Բաժակները քամուեցին մինչև իրենց տակը: Սկսուեց ոգևորուած մի բանակուիւ: Խօսում, վիճում, քննադատում էին գիւղական հասարակութեան վիճակը: Քաջլերում էին ճառախօսին, ցոյց էին տալիս նրան իւր գործունէութեան դժուարութիւնները, բայց և ապահովացնում էին, որ անպատճառ կաջողի նա, քանի որ համոզուած է իւր սկսած գործունէութեան սրբութեան և նպատակի վսեմութեան:

— Այո՛, — ասում էր Մանուէլեանը, — մեր գիւղական հասարակութիւնը շատ կարիքներ ունի. նա տնտեսապէս, բարոյապէս և մտաւորապէս շատ ստոր աստիճանի վրայ է կանգնած. նրան պէտք է բարձրացնել, և բարձրացնելու համար հարկաւոր է անձնագոհութիւն և ձեռներէցութիւն, որին ընդունակ եմ համարում Մարտիրոսեանին: Առաջարկում եմ նրա կենացը և մաղթում եմ նրա ծրագրներին կատարեալ աջողութիւն:

Էլի հուրրաներ, էլի կեցցէներ, էլի վիճաբանութիւններ:

Վերջապէս խօսեց Չաքուճեանը:

— Մենք էլ բաժանուում ենք ձեզանից, — ասաց նա. — բաժանուում ենք ձեզանից, մեր սիրելի ընկերներ. ես և Միանսարեանը գնում ենք աւելի քաղաքակրթուած երկրներ այնտեղից լոյս ու գիտութիւն բերելու և մեր հայրենիքում տարածելու համար: Ում շատ է տրուած, նրանից շատ պիտի պահանջուի, և դուք իրաւունք պիտի ունենաք մեզանից աւելի շատ պահանջելու, եթէ վերադառնանք մեր կուրսերը աջողութեամբ վերջացրած: Մարտիրոսեանի վճռականութիւնն ու հաստատամտութիւնը մեզ ստիպում է խոնարհուել նրա առաջ և երդուել նրա ներկայու-

թեանը, որ միշտ պիտի հետևենք իւր օրինակին:

Մի քանի ժամ յետոյ դէպի Բաթում գնացող շոգեկառքը տարաւ Միանսարեանին և Չաքուճեանին, իսկ Մանուէլեանն ու Մարտիրոսեանը մտան Բագու գնացող շոգեկառքը:

Բ.

Եօթը տարի էր անցել այն օրից, երբ առաջին անգամ Մարտիրոսեանը մտաւ իւր հայրենի գիւղի եկեղեցական-ճիսական ուսումնարանի շէմքից ներս ուսուցչի պաշտօնով: Նա այդ եօթը տարուայ ընթացքում շատ վշտեր կրեց, սարսեցնող տպաւորութիւններ և յուզումներ նրան բարոյապէս և Ֆիզիքապէս բոլորովին անճանաչելի էին դարձրել: Նա թէև էլի նոյն իդէալիստն էր, էլի գործում ու ապրում էր գաղափարի համար և էլի սիրում էր ուրիշների շահերն իրենինից գերադասել, բայց այլևս հաւատացած չէր իւր ուժերի բաւականութեանը: Նա ակամայ մտածում էր, որ գրեթէ անհնարին է մահմեդական լուծի տակ դարերի ընթացքում բարոյապէս ընկած, ստրկացած ժողովուրդն ուղղել, բարոյականացնել և անկախութիւն ու անհատականութիւն ներշնչել իրեն: Նա

տեսնում էր, որ այդ սիրելի և պաշտելի գիւղացու մէջ ջանում էին սպանել բոլոր սուրբ գագսումները: Նա տեսնում էր, որ եսը սարսափելի եսն էր գործում ամեն տեղ, ամեն հասարակական գործի մէջ երեւում էր մասնաւոր քէնը, կազմալուծում ու տկարացնում էր գիւղական հասարակութեան ուժերը, այնպէս որ համայնական գործ հաստատել այնտեղ շատ դժուար էր, գոնէ իւր ուժերը չէին ներում: Գիւղացին հասկանում էր իւր անկեղծ և անշահասէր խորհրդատուի խօսքերն ու բացատրութիւնները, բայց մի շարք մարդիկ գիւղի հրապարակում բարձրաձայն յայտարարում էին, որ աւելորդ բեռն է գիւղացու համար ուսումնարանը: Նրանք փսփսում էին հասկացող, ըմբռնող գիւղացու ականջին, որ աւելորդ է իւր որդու համար գոհել տարեկան մի քանի ըուբլի: Մարտիրոսեանը լրտում էր այդ փսփսուքը, նա լսում էր գանգատներ գիւղացուց, թէ տնտեսապէս շատ է նեղւում և չի կարող ուսումնարանի ծախսերը հոգալ, թէ և հէնց այդ գիւղացին տօներին, հարսանիքներին կամ ուրիշ որ և է հանգէսների ժամանակ իրեն թոյլ էր տալիս տասնեակներ ծախս անել, նոյն իսկ պարտք անելով և զրաւ գնելով իւր կալքն ու գոլքը: Կային իրենց անձուկ գիւթական դրութիւնից

գանգատուող գիւղացիներ էլ, որոնք ամենաչնչին մի վէճի համար գնում էին գաւառական քաղաքների ինքնակոչ «աբլակատ»ներին խնդիրքներ գրել տալու և իրար դէմ դատ բաց անելու համար: Իրենց ասածն առաջ տանելու համար նրանք զրկում էին նոյն իսկ իրենց ընտանիքներին և երեխաներին կարևոր պէտքերից: Ոչ ոք ոչինչ չէր ուզում գիջել իւր հարևանին կամ օգնութեան հասնել նրան որ և է կերպով: Եւ այս անողները, որանց պատճառն այն դասակարգն է, որ կոչւում է մեծատուն: Սրանք ամեն ջանք գործ էին դնում վարժապետին հեռացնել, որովհետեւ նա յորդորում էր գիւղացիներին ոչ մի դէպքում նրանց չգիմել պարտք վերցնելու համար: Բայց ոչինչ չէր օգնում. նրանք զօրաւոր էին և տկարներն աւելի լաւ ընտրում էին զօրաւորի մուրհակին գերի դառնալ, քան թէ իրենց անկեղծ բարեկամի կողմն անցնել. չէ որ նա էլ իրենց նման տկար էր, փող չունէր: Դրա հետևանքն այն էր լինում, որ նրանք ստիպւում էին գրեթէ միշտ կամ վերջնականապէս հրաժարուել իրենց անշարժ և շարժական ստացուածքներից կամ ուղարկել նոյն իսկ իրենց 13—14 տարեկան որդիներին Բագուում, Անդրկասպիայում կամ Թիֆլիսում փող աշխատելու և իրենց հայրերի

անխոհեմ պարտքերը վճարելու համար: Այդ պանդուխտները շատ անգամ քաղաքի վարակիչ միջնորդարտի ազդեցութեան ենթարկուած, շատ անգամ թշուառութեան մէջ փչացած, շատ անգամ էլ անաջողութեամբ իրենց մահուան մահիճը շալակած վերադառնում էին իրենց հայրենիքը: Իսկ քանիսն էրն էին մեռնում օտար երկնքի տակ: Այս, տեսնում էր այդ բոլորը Մարտիրոսեանը և համոզուում, որ գիւղացին չգիտէ տնտեսապէս ապրել, բացի դրանից նա տնտեսապէս շատ էլ ընկած է: Վերջապէս նա տեսնում էր, որ ինքն առանձին չէր կարող բաւականութիւն տալ իրեն շրջապատողներին. հարկաւոր էր ուժերը և գործունէութիւնը բաժանել, որպէս զի միասին կարելի լինի իրենց իրագործել: Նա մտածում էր, շատ անգամ ծրագրներ էր պատրաստում, իրագործելու համար ոչ մի ջանք, ոչ մի զոհողութիւն չէր խրանայում, բայց ինչ կարող էր անել բոլորովին առանձին: Իւր համալսարանական ընկերներն օգնութեան չէին հասնում իրեն. նա նոյն իսկ նրանց մասին ոչինչ չէր իմանում. միայն մի տարի նրանք կանոնաւոր թղթակցել էին միմեանց հետ: Նա սկսել էր լուսահատուել: Կար մի լուսահատական բան էլ, որ նրան ամեն անաջողութիւններից աւելի էր ճնշում: Համարձակ մի քանի մարդիկ, որ ունէին լիբը

յանդգնութիւն, ամեն ժամանակ առիթ էին փնտռում նրան ասելու, որ ինքը գիւղական հասարակութեանն աւելի շատ վնաս է տալիս, քան թէ օգուտ, որ ինքը ձրիակեր է, կնամարդի, մի որ և է կարեւոր գործի անընդունակ և իրենց վրայ վէր ընկած մի դիակ:

Եւ նա տանջուում էր, նա շարունակում էր իւր տենդային գործունէութիւնը: Առաւօտից մինչև երեկոյ ուսումնարանումն էր նա, մինչև գիշեր խօսում, վիճում էր գիւղացիների հետ և գիշերները ծրագրներ էր պատրաստում նրանց դրութիւնը բարւոքելու համար: Նա սկսել էր ատել իւր աւելի պաշտելի և աւելի սիրելի դարձած հայրենակիցներին, — բայց նա սիրում էր իւր գործը, ոգևորուած էր իւր գործունէութեամբ:

Նրա միակ միջիթարութիւնն էր տեսնել իւր աշակերտների առաջադիմութիւնը և ուրախանալ դրանով. նա տեսնում էր, որ իւր աշակերտներից ոմանք զգացել են իրենց ուսուցչի սոսկալի դրութիւնը և ջանում են իրենց թոյլ ուժերով օգնել նրան: Նա հրճուանքով լսում էր, որ իւր աշակերտների մէջ իրար օգնելու և ընկերակցութեան պէտքն ամիջական էր դառել և որ նրանք սկսել են այդ պէտքը գոհացնել. վերջապէս զգում էր, որ մի խուլ կոիւ էր սկսուել իւր աշակերտների և նրանց


ծնողների մէջ, որ երբեմն ընդհարումներ էին տեղի ունենում ուսումնարանական և այլ համայնական խնդիրների վերաբերութեամբ:

Մարտիրոսեանը հայ գիւղացուն այնքան անընդունակ չէր համարում և զարմանում էր սկզբներում, թէ ինչո՞ւ իրեն չեն հասկանում իւր հայրենակիցները, ինչո՞ւ նրանք հակառակ են իւր բերած ակնյայտնի բարօրութիւն խոստացող նորութիւններին և, զգալով հանգերձ որ հարստահարում են, իրենց հարստահարողներից չեն կարողանում հրաժարուել: Բայց նա շուտ հասկացաւ, շատ շուտ հասկացաւ, որ դրա պատճառն անիծուած մի կտոր սև հացն է, տնտեսական կենսական պահանջն է. նա հասկացաւ, որ իւր աղքատութիւնն արդէն ամենապարզ վանող զօրութիւնն էր: Նա յաճախ, շատ յաճախ լսում էր ոսկու անունը և ցաւում էր, որ շատ չունի այդ մետաղից, որպէսզի դրանով գէթ կարողանայ իւր գործունէութիւնը հաստատ հիմքերի վրայ դնել և շարունակել մինչև վերջը: Նա այլևս իւր բարօրական ուժերի վրայ սկսում էր կառկածել:

Գիւղացու կոշտ վարմունքի և իւր անաջողութիւնների վրայ աւելանալով և մի ուրիշ հանգամանք, նա դարձել էր ջղային, յուզուող և շուտ յուսահատուող: Նա ընտանեկան կեանքով էլ անբաղդ էր: Անտանիքն էլ նրանից երես էր դարձնում, նրան կոչում էր ձրիակեր, բեռ դարձած աղքատ ծնողների վրայ, որովհետև նա չէր կարողանում տարեկան 200 ռուբլուց աւելի փող աշխատել և տուն բերել, մինչդեռ այդ գումարը հազիւ կարողանում էր իւր «գրքերին և լրագրներին» բաւականացնել: Ի գուր խեղճ Մարտիրոսեանը բացատրում էր իւր գործի օգտակար լինելը. ի գուր թուաբանական հաշիւներով նա հաստատում էր, որ գիւղում ստացուած 200-ը քաղաքի 2,000-ից աւելի արժէ, բայց հայրը չէր կարողանում այդ հասկանալ. նա չէր կարողանում ըմբռնել, թէ ինչպէս 2,000-ից աւելի կարող է լինել 200-ը, քանի որ 200-ը երկու հարիւրանոց է, մինչդեռ 2,000-ը... ո՞հ, 20 հատ հարիւրանոցներ են: Նա կրկնում էր գրեթէ ամեն օր. — «Ի գուր, ի գուր կորան այնչափ փողերս, որ մսխեցի քեզ մարդ դարձնելու համար. ինչքն է հարկաւոր քո ուսումը, քանի որ լիմար ես: Ափսոս չէ՞ Խէչէնց Սահակը, տես, զոչաղ է հա՛. այսօր Բազումը նստած 150 մանէթ գոն լուղ է առնում, ինքն էլ ո՞չ ուսում ունի, ո՞չ զատ. մարդու տղան խելացի էր, դա՛. իւր գործն իմացաւ, գնաց աղաչի մօտ ճառարութեան մտաւ և այսօր նրա տրեխը...

2046 91/1

քով էլ անբաղդ էր: Անտանիքն էլ նրանից երես էր դարձնում, նրան կոչում էր ձրիակեր, բեռ դարձած աղքատ ծնողների վրայ, որովհետև նա չէր կարողանում տարեկան 200 ռուբլուց աւելի փող աշխատել և տուն բերել, մինչդեռ այդ գումարը հազիւ կարողանում էր իւր «գրքերին և լրագրներին» բաւականացնել: Ի գուր խեղճ Մարտիրոսեանը բացատրում էր իւր գործի օգտակար լինելը. ի գուր թուաբանական հաշիւներով նա հաստատում էր, որ գիւղում ստացուած 200-ը քաղաքի 2,000-ից աւելի արժէ, բայց հայրը չէր կարողանում այդ հասկանալ. նա չէր կարողանում ըմբռնել, թէ ինչպէս 2,000-ից աւելի կարող է լինել 200-ը, քանի որ 200-ը երկու հարիւրանոց է, մինչդեռ 2,000-ը... ո՞հ, 20 հատ հարիւրանոցներ են: Նա կրկնում էր գրեթէ ամեն օր. — «Ի գուր, ի գուր կորան այնչափ փողերս, որ մսխեցի քեզ մարդ դարձնելու համար. ինչքն է հարկաւոր քո ուսումը, քանի որ լիմար ես: Ափսոս չէ՞ Խէչէնց Սահակը, տես, զոչաղ է հա՛. այսօր Բազումը նստած 150 մանէթ գոն լուղ է առնում, ինքն էլ ո՞չ ուսում ունի, ո՞չ զատ. մարդու տղան խելացի էր, դա՛. իւր գործն իմացաւ, գնաց աղաչի մօտ ճառարութեան մտաւ և այսօր նրա տրեխը...



դառել: Դու ո՞վ ես, դու ի՞նչ ես: Մարդ նրա նման զաւակ ունենալու է, որ հանգիստ ապրի իւր ծերութեան օրերում: Դու զաւակ չես, կրակ ես, կրակ»:

Շատ անգամ էլ լսում էր այսպիսի խօսքեր. — «Զիմացայ քեզ դաստիարակել, որդի, հիմա եմ հասկանում միայն, որ մինչև որ աղայի թուքն ու մուրը չլսես, մարդ դառնալ չես կարող: Տես, ինչպէս լաւ արին ուրիշները: Ինձ ասում էին՝ որդիդ ծառայութեան տուր, ինչ պիտի անի այդքան ուսումը, խօմ վարդապետ դառնալու չէ: Ես չլսեցի նրանց և այժմ խայտառակուեցի նրանց մօտ: Ի սէր Աստուծոյ, ա՛ կնիկ, — դառնում էր նա Մարտիրոսեանի մօրը, — այս տղան մեզ համար փորձանք ծնար»:

Մայրն էլ հօր խելքիցն էր: Նա էլ պընդում էր, որ որդին պարտաւոր է փող աշխատել, իսկ փող աշխատելու համար պէտք է գիւղը թողնէ և գնայ քաղաք, ծառայէ այսինչի փեսի կամ այնինչի որդու նման, որպէս զի հասկանայ փողի արժէքը: Նա պարտաւոր էր իւր ընտանիքին օգնել նիւթապէս և նրանց տեսնողների ու հարևանների մօտ խայտառակ չանել:

Մարտիրոսեանը լսում էր այս բոլորը, առանձնանում էր և ժամերով լաց էր լինում:

«Միթէ փողն այնքան ամենակարող է, որ անկեղծ սիրող մօրն անգամ ստիպում է ուզարկել իւր որդուն օտար երկրներ փող ձեռք բերելու համար»:

Երբեմն նրա յուսահատութիւնն այն կէտին էր հասնում, որ որոշում էր թողնել գիւղը, իւր պաշտօնը և գնալ օտար երկրում փող աշխատելու, առանձնացած ապրելու հեռու իրեն ամեն օր մաշող յուզմունքներից. բայց միշտ զարշելով և զգուելով լետ էր մըղում իրենից այդ միտքը: Միթէ նա կարող է հեռու ապրել իւր սրտի ամենամօտ բաղձանքից, իւր իղէալներից և իւր ծրագրներից: Իրանք են նրա բոլոր երջանկութիւնն ու աշխատաւորի ապահով ապագան: Ա՛չ, ո՛չ: Իսկ ինչ կասեն իւր ընկերները, եթէ նա դասալիք եղած զինուորի նման պատուի դաշտից հեռացած մտնէր սարկութեան և խարդաւանութիւնների աշխարհը միմիայն փող վաստակելու համար: Եւ միթէ ինքը կարող է տանել խաղէինի քմահաճոյքը: Երբէք: Նա այդ չի անիլ, նա կը մնայ հայրենի գիւղում, իւր շէնացիների մօտ, կը տանջուի, կը չարչարուի և այնտեղ կը մեռնի սուրբ գործի համար ագնիւ անունով:

Եւ նա կուռում էր, կուռում էր շարունակ իւր իղէալին հասնելու համար:

Գ.

— Պարոնը տանը չէ:

— Ե՞րբ տանը կըլինի:

— Երեկոյեան ժամի 5-ից մինչև 7-ը:

Եւ Ֆրանտիկ հագնուած սպասաւորը  
գուռը փակեց հեռացող անձանօթի ետևից:

Վերջապէս փող աշխատելու համար Մարտիրոսեանը հեռացել էր իւր հայրենի գիւղից, թողել էր իւր սուրբ պաշտօնը և պանդխտութեան մէջ բաղդ որոնելու համար եկել էր Բագու իւր մի քանի հայրենակիցների հետ: Նրանք իջևանել էին մի քարվանսարայում, մինչև իրենց յարմար տեղ կամ պաշտօն կըճարէին: Մարտիրոսեանն անասելի յուսահատութեան մէջ էր: Իրաւ է, նա հաւատում էր, որ շուտ պաշտօն կստանայ, բայց չէր կարողանում հաշտուել այն գաղափարի հետ, որ ինքը պիտի ծառայի որևէ հաստատօրի քմահաճոյքին, որոնց հակակրելի և զգուելի էր գտնում մաքուր իդէալիստի բնագոյումով: Նա ջախջախուած էր հոգով ու սրտով և մխիթարուում էր միայն նրանով, որ շուտ կըվերադառնայ գիւղ և կըվերսկսի իւր գործունէութիւնը:

Քաղաք հասնելու առաջին օրն իսկ նա սկսեց դիմումներ անել և գրասենեակներում իրեն համար պաշտօն փնտռել: Նա ուզում էր ունենալ այնպիսի պաշտօն, որ իրեն թողնեն ազատ ժամանակ ընթերցանութեամբ զբաղուելու: Նա այդպէս էլ առաջարկում էր իւր ծառայութիւնը: Լսողները զարմացած նրա երեսին էին նայում և մերժում էին: Նա վերաւորուած թողնում էր գրասենեակը և գուրս էր գալիս:

Մի քանի դիմում անելուց յետոյ յուսահատուեց, պէտք զգաց լաց լինելու, Բագուից հեռանալու կամ մեռնելու: Նա տանջուում էր, երբ մի գրասենեակի առաջով անց էր կենում և մտածում էր մտնել այնտեղ ու պաշտօն խնդրել: Նա շուտով լքում զգաց և սկսեց թափառել Նաբերէժնայաի երկայնքը: Մտածում էր ու մտածում և չէր կարողանում ինքնիրեն հաշիւ տալ, թէ ինչ պատահեց և ինչ է պատահելու իրեն: Յանկարծ նրա դէմքը պայծառացաւ, նա շտապ անցուդարձ անող «գործի մարդկանց» մէջ նշմարեց մի շիք երիտասարդի և ճանաչեց նրան: Վահ, Մանուէլեանն էր նա: Մարտիրոսեանը դիմեց իւր նախկին ընկերոջ կողմը, ուրախութեամբ ձեռքը երկարացրեց նրան և պատրաստ էր նրան կրծքին սեղմել թանկագին դանձի պէս, եթէ

անցող-դարձողներից չակնածէր: Մանուէլեանը նրան բարեկեց ծայրայեղ քաղաքավարութեամբ, հարցրեց որպիսութիւնը, Բագու գալու մասին, և երբ իմացաւ, որ նա ուզում է ծառայութեան մտնել, նրան յայտնեց, որ Միանսարեանը կառավարիչ է մի ինչ որ նաւթարդիւնարբերական ֆիրմայի և Չաքուճեանը բրժիկութիւն է անում, որ նրանք մեծ ազդեցութիւն և ծանօթների ահագին շրջանակ ունին Բագուում, նոյն իսկ առաջինը Մարդասիրական ընկերութեան վարչութեան անդամ է, և որ նրանք անպատճառ և կարճ ժամանակում գործ կըճարեն «իրենց նախկին ընկերոջ» համար և թէ ինքն էլ այդ մասին կըխօսի նրանց հետ, եթէ հանդիպի նրանց ակմբանոցում կամ թատրոնում: Յետոյ իւր շտապ գործերն առարկելով հեռացաւ Մարտիրոսեանից, որովհետեւ չէր ուզում, որ իրեն տեսնեն իւր նախկին ընկերոջ հետ: Չէ որ հագին չունէր նոյն իսկ քիչ թէ շատ վայելուչ զգեստ: Մարտիրոսեանը չզգաց այդ. նա այնքան էր ուրախացել իւր ընկերոջ հանդիպումով և ոգեւորուել, որ այլևս իրականից վերացել էր մի օտար աշխարհ:

Մանուէլեանից հեռանալով Մարտիրոսեանը շարունակեց իւր պտույտը ծովի եզերքն ի վեր: Նա առաջին անգամ էր տեսնում ծո-

վը, որ շփշփում էր իւր եզերքները: Նա հիացած երկար նայում էր այդ լոյծ սաւանին, որ հարթ փուռում էր մինչև հորիզոնը և փոթփոթում էր թեթեւ քամու մղումի սակ: Արևը կարծես լողանում էր նրա կապոյտ և խոր աւազանում: Շոգենաւերը, մակոյկները, առագաստանաւերը հանդարտ օրօրում էին: Բանաստեղծական էր ծովը:

Եւ նա լիջեց բանաստեղծութիւններ ծովի մասին, դրանից յետոյ անցեալի մտապատկերներն սկսեցին հետզհետէ խտանալ նրա գանկում: Նա լիջեց ուսումնարանը, գասերը, ընկերներին, Թիֆլիսը, Պրոսպեկտը, ընկերական վիճաբանութիւնները: Նա էլի ոգևորուեց, էլի սկսեց յուսալ: Չէ որ Միանսարեանը, Մանուէլեանը և Չաքուճեանը նոյնպէս Բագուում են. չէ որ նրանց մօտ ընկերական շրջան կայ. չէ որ այլևս առանձին չէ. չէ որ վերջապէս իւր ազդու ընկերների միջոցով առանց խնդրելու շուտով պաշտօն կը ստանայ: Կը լսի իւր ընկերների գործունէութեան մասին, նրանց օրինակը ոգևորութիւն կը ներշնչէ իրեն և շուտ, գուցէ հէնց առաջիկայ ուսումնական սեզոնին կը հեռանայ Բագուից, կը գնայ գիւղ և կը շարունակի իւր կիսատ թողած գործունէութիւնը, որից առժամանակ հեռացել էր կեանքի պայմաններից ստիպուած:

Եւ աչքերը միշտ հեռուն լառած մտածում էր, երազում էր:

Յանկարծ մի սարսափելի տեսարան նրա ուշադրութիւնը գրաւեց: Իւր կանգնած տեղից քիչ հեռու կար մի նաւամատոյց, ուր կանգնած մի շոգեխաւի բեռն էին դատարկում երկու մեքենայ և մի քանի բանուորներ: Մի հաստափոր, միրուքը հինայած թուրք կատարեալ բաւականութեամբ հետևում էր բանուորների և մեքենաների շարժումներին և հպարտութեամբ չորս կողմն էր նայում, երբեմն էլ փոխում էր տեղն ու դիրքը և բարձր ձայնով խօսում էր իւր մօտ կանգնած մի երիտասարդ նորաձև հագնուած պարոնի հետ, որի շրթներից ժպիտը երբէք չէր պակասում և որ անվերջ լսում էր նրա ասածները: Նրանցից քիչ հեռու մի գործակատար շտապեցնում էր բանուորներին և մի թերթ թուղթ ու մատիտ ձեռին բռնած անդադար անցուդարձ էր անում հաստափոր թուրքի շուրջը, նրա առաջով: Իսկ բանուորները... նրանք բանում էին. քրտինքը վազում էր նրանց արևահար դէմքի վրայով, նրանց մէջքերը ծուռ էին և գրեթէ իրենք կիսամերկ էին. և աշխատում էին, աշխատում էին, մանաւանդ երբ հաստափորը մօտենում էր իրենց: Մարտիրոսեանին անբնական թուաց

այս տեսարանը, որ երբէք չէ համապատասխանում իւր մտքերին. նրան նոյն իսկ սարսափելի թուաց... մի կտոր սև հացի համար բոլորը, բոլորը խոնարհում են, աշխատում են գրաստի նման, ստորանում են... և միթէ ինքը չպիտի ստորանալ... Ոչ, նա չի կարող տանել այդ. նրան պէտք է շուտ հեռանալ այն աշխարհից, ուր մարդը գրաստանում է:

Յիշեց նա, որ Մանուէլեանը յայտնել էր իրեն իւր երկու համալսարանաւարտ ընկերների հասցէները: Շտապեց նրանց մօտ գնալ: Երկար թափառելուց և փնտռելուց յետոյ վերջապէս նա բաղդ ունեցաւ երկու ընկերների անունները, հայրանուններն ու ազգանունները կարգալ նրանց բնակարանների դռների վրայ: Նա զանգահարեց համարձակութեամբ երկու դռներն էլ: Միանսարեանի սպասաւորը մի քանի անգամ հեռացրեց նրան, դռնից յայտնելով որ պարոնը տանը չէ, բայց բժ. Չաքուճեանի դուռը կռնակի վրայ բացուեց, և շուտ ներս ընդունուեց նա, որովհետև հիւանդ կարծեցին: Կահլիճում մի քանի րոպէ սպասեցնելուց յետոյ բժիշկը նրան ընդունեց իւր ընդունարանում և հարցրեց նրա հիւանդութեան մասին: Մարտիրոսեանը շփոթուեց և հազիւ լսելի ձայնով կարողացաւ յայտնել, որ ինքը հիւանդ չէ, ինքը Մար-

տիրոսեանն է, որ եկել է տեսնելու իւր նախկին ընկերոջ: Բժիշկը կարճ կերպով յայտնեց, որ նրան չի ճանաչում և թէ ինքը երբէք այդ անունով ընկեր չէ ունեցել:

Մարտիրոսեանը չկարողացաւ էլի խօսել. արտասուքի երկու կաթիլ դուրս ցայտեցին նրա կոպերի յետեից: Ներողութիւն խնդրեց, դուրս եկաւ անհիւրասէր տնից և սկսեց արբած մարդու նման տատանուելով տուն գնալ:

Նա առաջին հարուածը զգացել էր, դրա հետ զգաց և երկրորդը. լիշեց Մանուէլեանի սառը և քաղաքավարի վերաբերմունքը իւր հետ և կուրծքը ճնշուեց:

Նա այլ ևս չէր ուզում մտածել Միանսարեանի մասին, բայց կեանքի անիծուած պայմանները, որ նրան հեռացրել էին հայրենիքից, ստիպել էին նրան թողնել իւր մաքուր և ազնիւ գործունէութիւնը և որ նրան դէմ յանդիման բերին իւր երկու խոստմանդրուժ ընկերներին, ստիպեցին նրան տասներորդ անգամն էլ գնալ Միանսարեանի մօտ և յետ դառնալ նրա դռնից:

Այդ օրը տասնմէկերորդ անգամն էր:

Գ.

Վերջապէս:

— Պարոնը տանն է,— հարցրեց Մարտիրոսեանը տասններկուերորդ անգամ այն սպասաւորին, որ միշտ իրեն տեսնելիս նշմարելի դժգոհութեամբ դէմքը ծամաճուում էր:

— Սյո՛ւ, տանն է, ո՞վ ուղարկեց քեզ:

— Իմ կողմից եմ եկել նրան տեսնելու:

— Գու՛ ո՞վ ես, ի՞նչ է անունդ:

— Մարտիրոսեան:

— Շատ լա՛ւ. այստեղ սպասիր, մի քանի ըրպէ յետոյ քեզ կասեմ, թէ պարոնն ուզո՞ւմ է քեզ ընդունել թէ՛ չէ:

Եւ ծառան ներս մտաւ այն դռնից, որտեղից բոլոր սրտով ուզում էր մտնել և ինքը, բայց ինչ արած, պետք էր սպասել: Նա անիծում էր այն բոլոր պատշաճութիւններն ու ձևակերպութիւնները, որոնք իւր ընկերոջ իրենից հեռացնում էին: Նա յոյս ունէր Միանսարեանի վրայ, չէր ուզում հաւատալ, որ նա էլ կընդունի իրեն Մանուէլեանի և Չաքուճեանի նման:

Մի քանի ըրպէ յետոյ կառքից իջաւ մի երիտասարդ վերջին մողայով հագնուած, բաց

արեց զուռը, որ ծառան վրայ էր արել, և համարձակ ներս մտաւ: Նա մի արգահատական և արհամարհական ակնարկ գցեց Մարտիրոսեանի վրայ, որի սիրտը մի ինչ որ նոր յուզում զգաց: Նա հասկացաւ, որ այդ պարսնը մեծ դեր է կատարելու իւր կեանքում: Նա հազիւ մտածեց այս բաները, զուռը դարձեալ փակուեց և ինքը դարձեալ մնաց կանգնած դրան առաջ, մայթի վրայ:

Վերջապէս ծառան երեաց և յայտնեց, որ պարոնն իրեն է սպասում:

Մարտիրոսեանն սկսեց բարձրանալ: Յուզումից նրա ոտները դողդողում էին, սիրտը սաստիկ բաբախում էր: Չէր զգում, թէ ինչպէս ուղեղը յանկարծակի անորոշ անգործութեան մէջ ընկաւ:

Նրան առաջնորդեցին նախասենեակ: Երկու րոպէ յետոյ Միանսարեանը ներս մտաւ հագնուած ինչպէս վայել է՝ իւր աստիճանն ունեցող մի պարոնի: Նրանք իսկույն իրար չճանաչեցին: Առաջինը Մարտիրոսեանը մօտեցաւ նրան և ասաց գրեթէ արտասուալից աչքերով.

— Ենորհակալ եմ, ընկեր, դու այդքան բարձրանալով դեռ չես մոռացել քո ընկերոջ և պատիւ ես անում նրան քեզ մօտ ընդունելով. շնորհակալ եմ, շնորհակալ եմ:

Միանսարեանը զարմացած այդ անկոչ հիւրի երեսը նայեց: Նա սպասաւորին պատուիրել էր ընդունել իրեն հարցանող Մարտիրոսեանին, որ Ք... եղբայրների հաշուապահն էր, մինչդեռ սա ով էր: Մի քանի վայրկեան անխօս մնացին երկուսն էլ: Մարտիրոսեանն իրեն շատ վատ զգաց. Միանսարեանն էլ իրեն չճանաչեց: Նա փնտռեց մի միջոց խոյս տալու և՛ այդ պարոնի ներկայութիւնից, և՛ նախասենեակից, առանձին մտորելու և լաց լինելու համար: Նա չուզեց իւր ով լինելը յայտնել, որովհետեւ սարսափում էր, որ Չաքուճեանի ընդունարանի ահուելի տեսարանն այստեղ էլ կրկրկնուէ: Անել գրութեան մէջ էր նա:

Միանսարեանը նրան ճանաչեց:

— Ա՛հ, դ՞ու ես Մարտիրոսեան: Ներիք, բարեկամս, քեզ իսկույն չկարողացայ ճանաչել: Այդ որքան փոխուել ես: Գիւղական կեանքը քեզ շատ է վնասել, շատ: Է՛հ, ասո՛ւ, խօսիր, քէֆ, հալ: Ի՞նչ բան բերեց քեզ այստեղ այնպիսի ժամանակ, երբ իւրաքանչիւր ուսուցիչ զբաղուած է իւր դասերով:

Նա խօսում էր ժպիտը շրթներին, բարձր ձայնով և կրկին ու կրկին Մարտիրոսեանի ձեռը սեղմելով:

Մարտիրոսեանն այդ սիրալիւր ցոյցից անասելի կերպով յուզուած յարեց.

— Սիրելի Միանսարեան, ես եկել եմ Բագու գործի մտնելու. պէտք է խնդրէի քեզանից, որ ինձ օգնես այդ բանում. լսեցի, որ դու ծանօթների մեծ շրջան ունես այստեղ և, թէ ուզենաս, կարող ես քո նախկին ընկերոջ համար մի պաշտօն գտնել:

Միանսարեանը ժպիտը շրթներին շարունակ սեղմում էր նրա ձեռքը և քաջալերում էր նրան, որ շարունակի: Երբ նա վերջացրեց,

— Դու, Մարտիրոսեան, — ասաց, — դու ուզում ես ծառայութեան մտնել: Միթէ քեզ նման մի մարդու կրկայելի գալ այս անիծուած երկրում քաշ տալ իւր մարմինը մի քանի սև գրոշի համար: Ո՛չ, բարեկամս, ես չեմ կարող քեզ համար պաշտօն խնդրել իմ ծանօթներից, որովհետև չեմ կարող հաշտուել այն գաղափարի հետ, թէ դու այստեղ ծառայում ես մի պարոնի քմահաճոյքին, փոխանակ քո գիւղում գործելու: Երբէք: Դու պարտաւոր ես շարունակել այնպէս, ինչպէս և սկսել ես: Աերագարձիր այնտեղ, ուր կանչում է քեզ իդէալդ: Եթէ ճանապարհաճախս չունիս, կըխօսեմ Մարգասիրական ընկերութեան առաջիկայ նիստի ժամանակ, և կորոշենք քեզ ճանապարհաճախս տալ: Դու պարաստուիր շուտ հեռանալու այստեղից:

— Ա՛խ, չեմ կարող, չեմ կարող:

— Ինչո՞ւ: Միթէ ոսկին քեզ էլ է կուրացրել, որ չես կարողանում պատուաւոր գործունէութիւնն անպատիւից զանազանել: Մարտիրոսեան, գնա՛, հեռացիր այստեղից ի սէր Աստուծոյ: Հասարակական գործիչն այն ժամանակ միայն այդ անուան արժանի կը լինի, երբ հասարակութեան շահերի համար կը վտանգի իւր սեպհական շահերը: Բարեկամ, քեզ հանգստութիւն չպիտի լինի երբէք, և դու չպիտի բաղձաս դրան. դու պարտաւոր ես մի օր քաղցած, մի օր կուշտ անցկացնել քո օրերը: Իդէալի զինուորի բաղձն է այդ:

Մարտիրոսեանը վերաւորւում էր այդ արդար յանդիմանութիւնները լսելով, բայց այդ վերաւորանքն իսկ նրան երջանկութիւն պատճառեց: Նրա երեւկայութեան առաջ պատկերացաւ վայրկենապէս Թիֆլիսը, իրարից բաժանուելու օրը տեղի ունեցած հանդէսը իւր կատարեալ մանրամասնութեամբ: Նա տանջոււմ էր, այ՛ն, իւր նախկին ընկերոջ ներկայութեանը, բայց և՛ չէր կարող նրա ասածներն այնպէս ընդունել, ինչպէս ընդունում էր սրանից եօթը տարի առաջ, ո՛չ թէ նրա համար, որ Միանսարեանը մոռացել էր իւր իդէալները, իւր ձգտումները, իւր գըրքերը, ո՛չ թէ նրա համար, որ նա քարոզում էր այն, ինչ ինքը չէր անում, այլ նրա՛ հա-

մար, որ կարիքն ստիպել էր իրեն գիւղից հեռանալ, Բագու գալ, ծառայութեան մտնել և փող աշխատել:

— Ա՛խ, Միանսարեան,—ասաց նա լալազին,—չես կարող երեւակայել, թէ որքան տանջուում եմ ես այս ըոպէիս, երբ քեզանից խնդրում եմ ինձ համար մի այլ պաշտօն ճարել, որ բուրոսովին հակասում է իմ ձգտումներին. բայց ինչ արած. կարիքն ստիպում է: Մի՛թէ ես երբեւիցէ կարող էի թողնել գիւղը, իմ գործունէութիւնը և գալ ներկայանալ իմ ընկերներին դասալիք եղած զինուորի նման: Ոչ, հաւատացնում եմ, ո՛չ: Ես փող աշխատելու և հանգիստ ապրելու համար չեկայ այստեղ, բայց գիւղացին ինձ ստիպեց, տգիտութիւնն ինձ բռնադատեց ուղարկեց այստեղ: Չկարծես, որ հեռացայ, որովհետեւ ինձ յարգել չկարողացան: Ոչ: Ես եկայ, որովհետեւ չէի կարող չգալ: Ի՞նչ կասեն այն մարդուն, որ իւր կիսն ու երախաները թողած ուրիշի կահկարասիքն է ուզում հրգեհից ազատել: Չէ, որ դա անբնական է:

Յորդ արտասուքը վազում էր Մարտիրոսեանի աչքերից խօսելու ժամանակ: Միանսարեանը նրան լսում էր միշտ ժպիտը շրթներին:

— Մի՛թէ դու ամուսնացել ես արդէն:

— Ո՛չ, և այդ մի բարեբաղդութիւն է: Գիւղացին չգիտէ տնտեսապէս ապրել, և տգիտութիւնը շատ տներ է քանդում: Ես անգամ գիւղացի մշակն աւելի է ստանում, քան քաղաքացի բանուորը, և չնայած որ գիւղում ապրելու պայմաններն անհամեմատ էժան են քաղաքից, բայց մշակի ստացածն իրեն չի բաւականանում: Այդպէս պատահեց և մեզ: Ես և հայրս միասին բաւականաչափ աշխատում էինք, և պէտք է ասած, որ լաւ էլ ապրում էինք. բացի մեր ամենօրեայ ծախսերից կարողանում էինք մի բան էլ յետ գցել քրոջս բաժինքի համար: Բայց հայրս չսպասեց մինչև փողը պատրաստ կը լինէր և սրանից չորս տարի առաջ 250 ըուբլի պարտք վերցնելով նրան մարդու տուեց, շուրջ հարսանիք անելով, որպէս զի թշնամու աչքը հանի: (Թշնամին էլ այն մարդն էր, որ ունէր հարսնացու աղջիկ և ուզում էր տալ նոյն մարդուն, որը մեր փեսան դառաւ): Ես ինչպէս որ հաւառակ էի քրոջս վաղ պսակուելուն, այնպէս էլ հաւառակ էի հօրս պարտք վերցնելուն: Հայրս ինձանից գաղտնի ստորագրել էլ արդէն մուրհակը: Այդ մուրհակը մեր տնտեսութիւնը խանդարեց, մեզ սպանեց կատարելապէս: Հայր ու որդի չորս տարի աշխատելով շարունակ ո՛չ միայն չէինք կարողանում այդ անիծուած

մուրհակն ազատել վաշխառուի ձեռքից, այլ նոյն իսկ տոկոսը չէինք կարողանում կարգին վճարել, այնպէս որ սրանից մի քանի ամիս առաջ վաշխառուն սպառնաց մեզ դատարան դիմել, եթէ չենք վճարել մեր պարտքը: Իբրև հարստահարուած, ես ուզեցի բողոքել այն գիշատիչ մուրհակի կազմութեան դէմ, բայց ի զուր. ամեն բան օրինական էր, նոյն իսկ հօրս և իւր վկաների ոտորագրութիւնները: Երկու շաբաթ առաջ պայմանաժամը լրացել էր, և մեր պարտատէրն ստիպեց մեզ կամ վճարել և կամ փոխել մուրհակը: Այս անգամ ես ստորագրեցի 300 ըուբլանոց մի մուրհակ 265 ըուբլանոցը յետ առնելու համար: Երկու տարի պայմանաժամ ունինք: Այժմ եկել եմ Բագու այդ պարտքը վճարելու համար: Տեսնո՞ւմ ես, բարեկամս, թէ որքան անտանելի է իմ դրութիւնը. օգնիր, ազատիր ինձ այս դրութիւնից, որ շուտ վերադառնամ իմ երկիրը և շարունակեմ իմ գործը:

Միանսարեանն ուշադրութեամբ լսում էր:  
— Քանի որ այդպէս է, ասելիք չունիմ:  
Եւ մի քանի ըոպէ լուութիւն տիրեց:  
— Ա՛հ, տես, մոռացել էի, — շարունակեց նա, — Մինասեանը դահլիճումն է: Լաւ ժամանակին ես եկել. քեզ կճանօթացնեն մեր հետ, կըխօսեմ նրա հետ քո ասածների

մասին, և նա անպատճառ գործ կըճարէ քեզ համար: Ինքը շատ ազնիւ մարդ է և առհասարակ հետաքրքրում է հասարակական գործերով և գործիչներով:

Այդ խօսքերն ասելուց յետոյ նա բռնեց Մարտիրոսեանի ձեռից և գրեթէ քարշ տալով նրան առաջնորդեց դահլիճ:

Նախ Մարտիրոսեանը շփոթուեց. նա առաջին անգամն էր, որ այդպիսի մի ճոխ կահաւորուած դահլիճ էր մտնում, որի կահարասիքի և արդուզարդի մասին միայն վէպերի մէջ էր կարդացել: Նա շփոթուած էր: Միանսարեանի ընդունելութիւնը, սիրալիը ցոյցերն ու խօսքերն նրան մի անբնական յուզում էին առթել, մանաւանդ երբ ինքն իրեն տեսաւ հանդէպ այն ճոխ կարասիներին և ճաշակաւոր արդուզարդին, որ պատկանում էր իւր նախկին ընկերոջ: Դահլիճում նստած պատուհանի առաջ մի երիտասարդ խօսում էր մի կնոջ հետ: Մարտիրոսեանը ճանաչեց նրան: Նա համարձակ և շիք հագնուած այն պարոնն էր, որ դրան առաջ արգահատանքով նայել էր իւր վրայ:

— Ձեզ մի հետաքրքրական պարոնի հետ պիտի ծանօթացնեմ, Արտեմ Մինէիչ, որը կարող է ձեզ բաւականութիւն տալ հասարակական խնդիրների մասին խօսելիս:

— Շնորհակալութեամբ ընդունում եմ այդ ծանօթութիւնը, Սերգէյ Նիկոլայեիչ, — պատասխանեց նա և ոտքի կանգնեց, յետոյ մի քանի քայլ մօտենալով նախկին դասընկերներին քաղաքավարութեամբ գլուխ տուեց Մարտիրոսեանին: Այնքան կեղծ էին նրա շարժումները, որ Մարտիրոսեանը կարծեց ինքն իրեն բեմի վրայ, ուր հանդիպում է մի դերասանի, որ հրաշալի կերպով ներկայացնում է կեղծ քաղաքակրթուածների տիպը իւր մի շարժումով:

— Պատիւ ունիմ քեզ ներկայացնելու պարոն Մինասեանին, որ ինժեներ է և կառավարում է այժմ Ն. ի գործարանները Սև-Քաղաքում: Իսկ պարոնը, — դարձաւ նա Արտէմ Մինէիչին ցոյց տալով Մարտիրոսեանի վրայ, — գիւղական ուսուցիչ է՝ հոգով սրտով նուիրուած իւր հասարակութեանը:

Արտէմ Մինէիչը քաղաքավարութեամբ ձեռք տուեց նոր հիւրին: Միանսարեանն աւելորդ համարեց նրան ծանօթացնել տիկնոջ հետ, որ սկզբից մինչև վերջ նայում էր անծանօթի վրայ, ինչպէս մի հետաքրքրական կենդանու վրայ, և ծիծաղը չկարողացաւ զսպել, երբ նրան տեսաւ իւր հին ու մաշուած շորերով այդ շքեղ դահլիճում թաւշեայ երեսով մի թիկնաթուռի վրայ նստած: Միան-

սարեանը նայեց նրա երեսին խորհրդաւոր կերպով: Տիկինը դուրս գնաց:

Մի քանի հարց ու պատասխաններից յետոյ Միանսարեանն ու Արտէմ Մինէիչն սկսեցին իրար հետ ունսերէն ինչ որ խօսել, որի ժամանակ Մարտիրոսեանն անզգալաբար աչքերը յառում էր մէկ թիկնաթուռներին, մէկ մետաքսեայ ու շղարշեայ վարազոյրներին, մէկ թանկագին գահաւորակին, առատաղին և յատակի վրայ փռուած գորգին:

Նա անորոշ մտքերի մէջ էր ընկել:

Վերջապէս Միանսարեանը դիմեց նրան և ասաց.

— Մենք քո մասին էինք խօսում: Բաւախանում մի յարմար պաշտօն կայ մի մեծ ֆիրմայի հանքային գրասենեակում. ես կը խօսեմ այսօր հեռախօսով կառավարչի հետ, և նա քեզ կընդունի: Կարծեմ 35 բուբլի են վճարում ամիսը և տալիս են սենեակ ու լոյս, բայց շուտ շուտ են աւելացնում նրանք ուճիկները: Ըստ իս, այդ բանը բաւական ձեռնտու է քեզ համար, որովհետև այնտեղ փող ծախսելու տեղ չկայ, մինչդեռ քաղաքում իւրաքանչիւր քայլափոխք կըստիպի քեզ մի բան գնել:

— Ի՞նչ պէտք է անել այնտեղ:

— Գրել, ինչ որ կըլանձնեն գրելու:

— Մթթէ քաղաքում մի այգւլիսի պաշտօն չկայ:

— Քաղաքում պաշտօն ճարել շատ դժուար է, մանաւանդ որ մենք միշտ յարաբերութիւն ունենք Սև-Քաղաքի և Բալախանու հետ: Քաղաքում լաւ չեն վարձատրում: Գու պարտաւոր ես աւելի շատ եկամուտ բերող պաշտօն ձեռք բերել, որպէս զի կարողանաս շուտ պարտքերդ վճարել ու հեռանալ այստեղից:

— Ի սէր Աստուծոյ ինձ մի այնպիսի գործ գտէք, որ գէթ ընթերցանութեամբ զբաղուելու ժամանակ ունենամ. առանց դրան ես շատ կըտանջուեմ:

Միանսարեանն ու Արտեմ Մինէիչն իրար երես նայեցին:

Մարտիրոսեանը չնկատեց այդ:

— Ձեր ցանկացածը կատարել շատ դժուար է, բայց կաշխատեմ մի բան անել ձեզ համար, — ասաց վերջապէս Արտեմ Մինէիչը: — Վաղը կէսօրից յետոյ եկէք մեր գրասենեակը. ես այնտեղ կըլինեմ և ձեզ մի բան կասեմ:

Հինգ րոպէ յետոյ Մարտիրոսեանը դուրս եկաւ իւր նախկին ընկերոջ տնից, անիծելով այն օրը, որ հեռացաւ հայրենիքից և եկաւ Բագու:

Ե.

Մի ամիս էր, ինչ որ Մարտիրոսեանը ծառայում էր Կ-և ընկերութեան գրասենեակում իբրև գործակատար: Նա սկզբում բաւական դժուարութիւններ կրեց, մինչև որ կարողացաւ ընտելանալ իւր նոր գործին: Առաւօտեան ութ ժամից գրեթէ մինչև գիշերուայ ութ ժամը նա զբաղուած էր լինում գրասենեակի գործերով: Ժամն Գ-ից յետոյ աշխատում էր ընթերցանութեամբ զբաղուել, բայց չէր կարողանում կատարելապէս օգտուել իւր կարգացած գրքերից, որովհետև բոլորովին յոգնած դադարած ուղեղն ապստամբուում էր: Նրա օրերն անցնում էին նորանոր յուզումներով, որոնք նրան մաշում էին և՛ հոգեպէս, և՛ ֆիզիքապէս: Նա շատ անգամ յուսահատուում էր, զգում էր անպարտելի լքում, որին անձնատուր էր լինում առանց դիմադրելու:

Քաղաքի կեանքը, ընկերական շրջանի բացակայութիւնը, հայրենիքից հեռի լինելը, իրեն շրջապատողների վշտակիր ընկերակցութիւնը, ապրելու անձեռնտու և դժուար պայմանները նրան դարձրել էին հիւանդ և

անընդունակ: Շատ անգամ նա դժուարութեամբ էր հասկանում հաշուապահի կամ կառավարչի բացատրածը, և այդ բանը դժգոհութեան տեղիք էր տալիս: Այնուամենայնիւ նա չէր մոռանում իւր իրէտալը:

Հէնց որ իւր առօրեայ գործերը կանոնաւոր ընթացք ստացան, նա իւր շուրջը հաւաքեց իւր ծանօթ գործակատարներին, որոնց տնտեսական պայմաններն ստիպել էին նրանց հեռանալ հայրենիքից և օտարութեան մէջ բազմ փնտռել: Նա նրանց հաւաքում էր, նրանց սովորեցնում: Շատ անգամ վիճում էին, խօսում էին, կարգում էին մինչև ուշ գիշեր: Նրանք էին իւր ընկերները և նրանց ընկերութիւնը իւր ընկերական շրջանը: Բայց որքան անտանելի էր իւր համար այդ շրջանը, ուր պակասում էր գաղափարակից ընկերը, ուր իւր ասածները նորութիւններ էին, որոնց ճշմարտութեան վրայ կասկածելու հակամէտ էին բոլորը: Միայն մխիթարւում էր նրանով, որ ինքնիրեն կարծում էր գիւղում և մի քանի մոռանում էր իւր իսկական գրութիւնն ու անձնատուր լինում այն ոգևորութեան, որ իրեն կապում էր անցեալ պատուաւոր գործունէութեան հետ:

Միթէ իւր շուրջը հաւաքուող և իրեն լսող գործակատարները գիւղացիներ չեն. մի-

թէ նրանք միւսնոյն միջավայրի և դաստիարակութեան ծնունդները չեն. միթէ միւսնոյն սկզբունքներով չեն մեծացել: Երաւ է, թէ քաղաքի միջավայրը նրանց բաւականաչափ բարեփոխել էր բարոյապէս, բայց նրանց առաջին խօսքերից, նրանց ապրուստի ամենանշան երևոյթից, նրանց գործերի կերպ ու ձևից իսկոյն աչքի էին ընկնում նրանց ինչ դաստիարակութեան ծնունդ լինելը: Նա շուտ նկատեց իւր ընկերակից-բաղդակիցների շարքում զգուելի հակումներ: Նա տեսնում էր, թէ որքան ստորանում են նրանցից ոմանք կառավարչին կամ խազէիներն դիւր գալու համար, թէ ինչ միջոցներով ջանք էին գործ դնում իրար ձեռից պաշտօններ յափշտակելու, իրար մեծերի աչքից զցելու և իրենք իրենց բարձրացնելու համար: Նա տեսնում էր այդ, ուղղում: Նա գիւղացու վիճակը թշուառ էր գտել, գործակատարների վիճակն արգահատելի գտաւ: Նա գիւղացու վիճակն անտանելի էր գտել, գործակատարների վիճակը դառն գտաւ: Նա աւելի ցաւում էր այս վերջինների վրայ, աւելի հոգում էր սրանց դաստիարակութեան մասին, որովհետև սրանք իրենց հայրերի տգիտութեան զոհերն էին, որովհետև սրանք մի քանի տարի լստոյ մեծ մղում պիտի առաջացնէին գիւղացու

կեանքի, ընտանեկան և համայնական սովորութիւնների և ապագայ սերունդի դաստիարակութեան գործում:

Մարտիրոսեանը իւր սովորական վճռականութեամբ և ոգևորութեամբ ձեռնարկեց այդ ազնիւ գործունէութեան, հակառակ այնքան բարոյական խոչընդոտներին նա շարունակ գումարում էր շաբաթը երկու ժողով և այդ ժողովների մէջ շարունակում էր զիւղում թողած խօսակցութիւնները, քարոզները և բացատրութիւնները: Գործակատարներն էլ շատ սիրով էին վերաբերում նրան, և շատ քիչ անգամ էր պատահում, որ ժողովքից բացակայ էին լինում:

Մի օր Մարտիրոսեանը յուզուած մտաւ Ս.-ի կանտորը սովորական ժամանակից մի ժամի չափ ուշ: Այնտեղ էին հաւաքուած իւր ընկերները, որոնք զարմանում էին նրա ուշանալուն վրայ և նրա յուզումը տեսնելով պաշարեցին նրան և հարցնում էին անվերջ առանց պատասխանի սպասելու: Մարտիրոսեանը լռեց մի քանի րոպէ, լետոյ ասաց.

— Անբարոյական արարածներ. իրենք մոռացել են ամեն սրբութիւն և ազնուութիւն, մեզ էլ ստիպում են մոռանալ: Թող գնան կլուբ, կանաչ սեղանի շուրջը հաւաքուեն: Նրանք ինչ վնաս ունեն, որ ես զբա-

ղուեմ իմ ընկերների հետ ընթերցանութեամբ և լուրջ ու օգտակար խօսակցութիւններով:

Մի քանի հարցերի պատասխան տալուց լետոյ հասկացուեց, որ խաղէինը նրան յայտարարել է այլ ևս՝ չհաւաքել իւր շուրջը գործակատարներին, նրան խրատել է այդ փչացնող ընկերութիւնից հեռի մնալ, վերջապէս նրան զգուշացրել է իրենց կանտորից շատ չհեռանալ կամ մարդ չընդունել կանտորում, մանաւանդ զիշերները:

— Նրանք քեզ վատ օրինակ կը տան, — ասել էր նա:

Ընկերները ոչինչ չասացին, ո՛չ յուզուեցին, ո՛չ զարմացան, որովհետև դա մի հասարակ բան էր: Իւրաքանչիւրն սկսեց խօսել իւր կրած յանդիմանութիւնների մասին, խաղէինների անմարդավարի վերաբերմունքի մասին, նրանցից հասած վիրաւորանքների մասին:

Կէս ժամ լետոյ թէև Մարտիրոսեանը կարողացաւ իւր զբաղումը շարունակել, բայց այն զիշեր շատ տանջուեց: Մտածում էր. միթէ Աստուած երգուել է նրան մի րոպէ հանգստութիւն չըտալ:

Այդ դէպքից անցել էր մի քանի օր: Ամսի վերջն էր և ինքն այդ ամսուայ ընթացքում արած մանր ծախսերի հաշիւը ներկայացրել էր, որ ռոճկի հետ միասին ստանայ:

Խագէինն ուշադրութեամբ մի քանի անգամ գումարին նայեց, լետոյ դարձաւ հաշուապահին և նրան ուսերէն ասաց, որ ուշադրութեամբ մտիկ անի մանրամասնութիւններին: Մարտիրոսեանը թուղթն առնելով տուեց հաշուապահին: Այս վերջինը իւր կողմից ապահովացրեց ճշտութեան մասին: Մարտիրոսեանը թուղթն առնելով հաշուապահի ձեռից դարձեալ տուեց խագէինին, որն էլի մի քանի անգամ ուշադրութեամբ նայեց նախ գումարին, լետոյ գործակատարին:

— Ինչ այնպէս է թւում, որ այս ամսուայ ծախսերը սովորականից շատ են եղել:

Մարտիրոսեանը կարմրեց: Ի՞նչ իրեն մեղադրում են գողութեա՞ն համար:

Եւ առանձնացաւ այն մասում, որ գործակատարին էին յատկացրել գրասենեակում, ձեռների մէջ առաւ գլուխը, աչքը յառեց մի կէտի և երկար մտիկ էր անում:

Մի քանի րոպէ մնաց այդ դրութեան մէջ: Կանչեցին, և նա պարտաւորուած ներկայացաւ խագէինին նրա հրամանները լսելու:

— Այն տղաների հետ էլի ես ժողովներ անո՞ւմ:

— Ո՛չ:

— Ինչո՞ւ ես խարում. չէ որ ես գիտեմ այդ:

Մարտիրոսեանը շփոթուեց, գլուխը խոնարհեցրեց և սկսեց գետնին նայել:

— Ես քեզ ժամանակին ասացի, որ հեռանաս նրանցից. նրանք վատ բաներ կըսովորոցնեն քեզ. բայց դու ինչ չլսեցիր. այժմ ի՞նչ ասեմ:

Մարտիրոսեանը շարունակում էր տախտակամածին նայելը:

— Նրանցից հեռացիր, — շարունակեց խագէինը, — մասնաւորապէս արած ծախսերիդ և սուլած հաշուիդ ուշադրութիւն դարձրու:

Մարտիրոսեանն այդ օրուայ դէպքը պատմեց ընկերներին: Նա զարմանում էր, թէ ինչո՞ւ է կասկածում խագէինը իւր վրայ, բայց շուտ հասկացաւ դրա պատճառը, երբ ընկերներից մէկը պատմեց, թէ կան գործակատարներ, որոնք մանր ծախսերի գումարն աւելացնում են, և թէ հէնց իրենց խագէիններն այդ տիպի գործակատարներից են, որոնք իրենց խարդախութիւնների շնորհիւ կարողացել են հարստութիւն դիզել:

Նա սկսեց մի մեծ բարոյական ճառով բացատրել, որ այդ գողութիւն է, անազնութիւն է, անբարոյականութիւն է:

— Մեր ստացած փողը մեզ չի բաւականացնում. մեր կարիքները շատ են. թո՛ղ վճարեն մեզ մեր կարիքների համեմատ, և

մենք չենք գողանալ այլևս,—ասաց անկեղծութեամբ գործակատարներից մինը:

Մարտիրոսեանն զգաց, որ նա ճշմարիտ էր ասում. երեք ամսուայ ընթացքում իւր վրայ փորձել էր այդ: Նա շուտ չէ, նոյն իսկ ագահ էր, բայց այդ երեք ամսում չէր կարողացել մի բուրբի յետ զցել իւր հատուցանելի պարտքի գումարը կազմելու համար:

Երկար հոգեկան կռուից յետոյ ակամայ լաղթուեց բարոյականութիւնը, որի միջոցով նա ուզում էր 300 բուրբի պարտքը վճարել և գիւղ գնալ իւր սուրբ պաշտօնը շարունակելու...

2.

Մարտիրոսեանի Բագու գալու օրից անցել էր չորս տարի: Նա հարիւր բուրբով հաշուապահ էր մէկի մօտ: Նա վճարել էր թէև իւր պարտքերը, բայց չէր մտածում հեռանալ Բագուից և որոշել էր երբէք չհեռանալ: Նա գտել էր «ապրելու գաղտնիքը»: Նա սովորել էր, որ առանց փողի ոչինչ չի կրելի անել:



« Ազգային գրադարան



NL0322760

20.049